ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № Ք-ԴՀ-019/21

ք. Երևան 14 մայիս 2021թ.

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, (այսուհետ՝ **«Պատվիրատու»**), ի դեմս տնօրեն **Գարիկ Սողոմոնյանի**, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և **«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն**, (այսուհետ՝ **«Կատարող»**), ի դեմս տնօրեն **Արմեն Ամիրջանյանի**, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագայում նաև՝ **«Կողմեր»**, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կատարողը իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ TLD-100 տիպի թերմոլյումինեսցենտային դոզիմետր սարքավորումների միջոցով իրականացնում է Պատվիրատուի 3 (երեք) աշխատակիցների, ովքեր առընչություն ունեն իոնիզացնող ճառագայթման աղբյուրների հետ, դոզիմետրիկ չափումներ և Պատվիրատուին տրամադրում չափումների արդյունքները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրի 1-ին կետում նշված աշխատանքները կատարել իր անհատական դոզիմետրերի միջոցով, ժամանակին և որակով՝ համաձայն սույն պայմանագրին կից Տեխնիկական առաջադրանքի (Հավելված 1) և Օրացուցային պլանի (Հավելված 2):

2.2. Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքներն ու վճարել դրանց դիմաց համաձայն սույն պայմանագրի 4-րդ կետի:

2.3. Պատվիրատուն պարտավորվում է նախքան չափումների սկիզբը՝ համաձայն Օրացուցային պլանի (Հավելված 2), Կատարողին տրամադրել աշխատանքի կատարման համար անհրաժեշտ տվյալները:

2.4. Պատվիրատուի կողմից Օրացուցային պլանով սահմանված դոզիմետրերի հանձնման-ընդունման ժամանակացույցի խախտման դեպքում՝ Կատարողը դոզիմետրիկ չափումներն իրականացնում է դոզիմետրերի փաստացի հանձնման ժամանակահատվածի համար:

2.5. Պատվիրատուն պարտավորվում է Օրացուցային պլանով նախատեսված ժամկետներում կամ պայմանագրի ժամկետից շուտ լուծվելու դեպքում՝ 5 օրյա ժամկետում, վերադարձնել դոզիմետրերը Կատարողին:

2.6. Պատվիրատուն պարտավորվում է դոզիմետրերի կորստի կամ վնասելու դեպքում փոխհատուցել անհատական դոզիմետրի գինը՝ 24,000.00 (քսանչորս հազար) ՀՀ դրամ: Դոզիմետրը համարվում է վնասված, եթե դետեկտորը ենթարկվել է դեֆորմացիայի կամ դետեկտորի թերմոլյումինեսցենտային էլեմենտը կամ տեֆլոնային թաղանթը վնասվել են (տեղաշարժվել կամ պոկվել):

2.7. Պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մեկ տարի ժամկետով:

3.2. Եթե պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն տասնհինգ օր առաջ կողմերից որևէ մեկը գրավոր չի ծանուցում մյուս կողմին պայմանագիրը դադարացնելու վերաբերյալ, ապա պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է սույն պայմանագրի 3.1 կետում նշված ժամկետով:

Сканировано с CamScanner

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով կատարվող աշխատանքների ընդհանուր արժեքը (պայմանագրային գինը) կազմում է **50,687.00 (հիսուն հազար վեց հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ,** ներառյալ՝ ԱԱՀ:

4.2. Պայմանագրի ամբողջ արժեքը վճարվում է պայմանագրի ժամկետի ավարտին:

5. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1. Դոզիմետրիկ չափումների արդյունքները Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է հաշվետվության տեսքով (յուրաքանչյուր եռամսյակ): Հաշվետվությունը հանձնվում է Պատվիրատուին՝ Պատվիրատուի կողմից դոզիմետրերի վերադարձման պահից 10 օրվա ընթացքում:

5.2. Պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտից հետո՝ Պատվիրատուի կողմից դոզիմետրերի վերադարձման պահից 10 օրվա ընթացքում, Կատարողը Պատվիրատուին է հանձնում չափումների արդյունքների վերաբերյալ վերջնական հաշվետվությունը՝ /մեկ օրինակ/ հանձնման-ընդունման ակտով:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն պայմանագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

6.2. Սույն պայմանագրով սահմանված պայմանագրային գինը ենթակա է փոփոխման կողմերի համաձայնությամբ՝ պայմանավորված ՀՀ տարադրամի փոխարժեքի զգալի փոփոխությամբ:

6.3. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Պայմանագիրը կարող է ժամկետից շուտ լուծվել Կողմերի համաձայնությամբ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ	**«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ**
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21	ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՎՀՀ 08417304	ՀՎՀՀ 02558849
	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ,
	հ/հ 2052022100061001
Տնօրեն՝	Տնօրեն՝
_____ **Գ. Սողոմոնյան**	_____ **Ա. Ամիրջանյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.
Digitally signed by SOGHOMONYAN GARIK 1611790506 Date: 2021.05.18 14:19:14 AMT	Digitally signed by AMIRJANYAN ARMEN 2210610141 Date: 2021.05.14 16:12:05 AMT

Сканировано с CamScanner

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

անձնակազմի անհատական դոզիմետրիկ չափումների իրականացման

1. **Առաջադրանքի կատարման հիմքը.**
   «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պատվեր-նամակ:
2. **Առաջադրանքի նպատակը.**
   Պատվիրատուի իոնացնող ճառագայթման աղբյուրների հետ առնչություն ունեցող անձնակազմի անհատական դոզիմետրիկ չափումների իրականացում և չափումների արդյունքների տրամադրում:
3. **Առաջադրանքի բովանդակությունը.**
   Պատվիրատուն Կատարողին տրամադրում է տվյալներ իոնացնող ճառագայթման աղբյուրների հետ աշխատանքներ իրականացնող անձնակազմի վերաբերյալ՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տարեթիվ, սեռ, պաշտոն, աշխատանքային ստաժ, աշխատանքային վայր (բաժանմունք, ստորաբաժանում):
   Կատարողը Պատվիրատուին տրամադրում է համապատասխան քանակությամբ ստուգաչափված, համարակալված անհատական դոզիմետրեր և աշխատակիցներին դոզիմետրերի կցման ցանկը:
   Դոզիմետրիկ չափումները կատարվում են եռամսյակային պարբերականությամբ:
   Պատվիրատուն եռամսյակը մեկ Կատարողին վերադարձնում է տրամադրված անհատական դոզիմետրերը և հաջորդ եռամսյակի չափումների իրականացման համար ստանում նոր դոզիմետրեր:
   Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է չափումների արդյունքները՝ սույն տեխնիկական առաջադրանքի 6-րդ կետին համապատասխան:
4. **Աշխատանքին ներկայացվող պահանջները.**
   Աշխատանքները (ներառյալ դոզիմետրիկ համակարգի ստուգաչափումը) կատարվում են համաձայն "Harshaw Dosimetry System (TLD Reader, WinREMS, and Dose Computation Algorithm)", "System Calibration Procedure, Publication No. ALGM-W-C-0801-001, August 3, 2001", "Model 4500 Manual TLD Reader,with WinREMSTM, Operator's Manual, Publication No. 4500-W-0-0602-004, June 28, 2002" փաստաթղթերի:
5. **Օգտագործվող դոզիմետրիկ համակարգը.**
   Harshaw 4500 դոզիմետրիկ համակարգ՝ TLD-100 տիպի թերմոլյումինեսցենտային դոզիմետրերով և WinRems ծրագրային միջոցի ապահովմամբ:
6. **Դոզիմետրերի հանձնումը և ընդունումը**
   Անհատական դոզիմետրերի հանձնում-ընդունումը կատարվում է «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ում: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման սկզբում և ավարտին դոզիմետերի հանձնում-ընդունումը կատարվում է Պատվիրատուի և Կատարողի ներկայացուցիչների ստորագրությամբ:
7. **Դոզիմետրերի օգտագործմանը և պահպանմանը ներկայացվող պահանջները (կցված են):**
8. **Դոզիմետրիկ չափումների արդյունքների ներկայացումը**
   Դոզիմետրիկ չափումների արդյունքները ներկայացվում են հաշվետվության տեսքով եռամսյակային պարբերությամբ՝ Պատվիրատուի կողմից դոզիմետրերի վերադարձման պահից 10 օրվա ընթացքում: Չորրորդ եռամսյակի չափումների արդյունքների հետ միաժամանակ Պատվիրատուին հանձնվում է նաև վերջնական հաշվետվություն (պայմանագրի շրջանակներում իրականացված չափումների ամբողջական հաշվետվություն):
   Վերջնական հաշվետվության պատճենը ներկայացվում է ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե:

ՊԱՀԱՆՋՆԵՐ

անհատական դոզիմետրերի օգտագործման և պահման

- Կատարողը, նախքան Պատվիրատուին անհատական դոզիմետրերի տրամադրումը, յուրաքանչյուր աշխատակցի կցում է համապատասխան համարով անհատական դոզիմետր, որը տվյալ աշխատակիցը պետք է կրի ամբողջ աշխատանքի ընթացքում,
- անհատական դոզիմետրը կրում են կրծքավանդակի ձախ մասում՝ հագուստի վրա: Պաշտպանիչ գոգնոց կրելու դեպքում հիմնական անհատական դոզիմետրը ամրացվում է կրծքավանդակի ձախ մասում՝ գոգնոցի տակ, իսկ լրացուցիչ դոզիմետրը (եթե այդպիսին կա)՝ գոգնոցի վրա,
- արգելվում է անհատական դոզիմետրը տալ այլ աշխատակցի կամ փոխարինել մեկ այլ դոզիմետրով,

Сканировано с CamScanner

- դոզիմետրիկ հսկողության ենթակա աշխատակցի աշխատանքից ազատման կամ նոր աշխատակցի ընդունման մասին անհրաժեշտ է տեղեկացնել Կատարողին՝ վերադարձնել դոզիմետրը և/կամ ստանալ նոր դոզիմետր,
- արգելվում է դոզիմետրի պաշտպանիչ պատյանը բացել, դիտավորյալ ենթարկել իոնացնող ճառագայթման, բարձր ջերմաստիճանի, խոնավության կամ երկարատև արևի ճառագայթման ազդեցության,
- ոչ աշխատանքային ժամերին դոզիմետրերը պահվում են համապատասխան պահարանում՝ իոնացնող ճառագայթման աղբյուրներից հեռու:

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

մեկ տարվա դոզիմետրիկ չափումների աշխատանքի կատարման

	Աշխատանքային փուլերը	Աշխատանքային փուլերի կատարման ժամկետ
1.	Պայմանագրի կնքում	Պայմանագրի կնքման օր
2.	Աշխատանքների սկսման համար անհրաժեշտ տվյալների տրամադրում	Պայմանագրի կնքման օր +7 օր
3.	Անհատական դոզիմետրերի ստուգաճշտում	Պայմանագրի կնքման օր +7 օր
4.	Անհատական դոզիմետրերի հանձնում Պատվիրատուին	Պայմանագրի կնքման օր +12 օր
5.	Անհատական դոզիմետրերի ընդունում և նոր դոզիմետրերի	Չափումների սկիզբ +90 օր
6.	I եռամսյակի չափումների արդյունքների հաշվետվություն	Անհատական դոզիմետրերի հանձնում-ընդունում +10 օր
7.	Անհատական դոզիմետրերի ընդունում և նոր դոզիմետրերի հանձնում Պատվիրատուին	II եռամսյակի սկիզբ +90 օր
8.	II եռամսյակի չափումների արդյունքների հաշվետվություն	Անհատական դոզիմետրերի հանձնում-ընդունում +10 օր
9.	Անհատական դոզիմետրերի ընդունում և նոր դոզիմետրերի հանձնում Պատվիրատուին	III եռամսյակի սկիզբ +90 օր
10.	III եռամսյակի չափումների արդյունքների հաշվետվություն	Անհատական դոզիմետրերի հանձնում-ընդունում +10 օր
11.	Անհատական դոզիմետրերի ընդունում և նոր դոզիմետրերի հանձնում Պատվիրատուին	IV եռամսյակի սկիզբ +90 օր
12.	IV եռամսյակի չափումների և տարեկան արդյունքների հաշվետվություն	Անհատական դոզիմետրերի հանձնում-ընդունում +10 օր
13.	Պայմանագրի արժեքի վճարում	Վերջնական արդյունքների հաշվետվություն +10 օր

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ

_____ **Գ. Սողոմոնյան**

Կ.Տ.

Digitally signed by SOGHOMONYAN GARIK
1611790506
Date: 2021.05.18 14:20:01 AMT

ԿԱՏԱՐՈՂ՝
«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ

_____ **Ա. Ամիրջանյան**

Կ.Տ.

Digitally signed by AMIRJANYAN ARMEN
2210610141
Date: 2021.05.14 16:12:23 AMT

Сканировано с CamScanner